պանիրն ու լեռան մեղրը առատաբար դաշտեցի եղբարց առջեւ դրին, լցուցին, եւ իրենք էլ մէկ-մէկ պատառ առնելով խեղճերուն քաջալեր կը լինէին, որ ուտեն զօրանան. «Ո՞Յ գիտէ, եղբա՛րք,— կ'ըսէին,— կարելի է վաղիւ աշխատիլ պէտք լինի, եւ դուք զօրութեան պէտք ունիք: Կ'երէ՛ք, եղբարք, համարեցէք թէ բուն ձեր տանն էք»:

— Այո, կ'ըսէր երիտասարդ դաշտեցի մը դառն ծիծաղով, բուն մեր տունն հիմա բաց երկնքին տակն է, իսկ մեր ընտանիքը, ո՛յ գիտէ Արաբիոյ ո՛ր կողմն կը գտնուին՝ եթէ ո՛ղջ են:

Եթէ ո՛ղջ են,— կրկնեցին քանի մը երիտասարդք, եւ քանի մի ձեռք բռնցի ալք կը արբէին եւ ոմանք հացին պատառը արտասուաց աղով կը թանային:

Էլ ժամ էր, վասնզի այդ վայրկենին ոչ մէկոմն քով ախորժան չի մնաց բերանը հացի պատառ դնելու, եւ հիւրընկալ քահանան կանդնեցաւ «Ձկերողս աստուած օրհնեսցէ», ըսաւ ու խաչակնքեց. եւ աչքը դէպի սրահին խորութեան դարձուց եւ մութին մէջ զննեց տեսաւ բազմութիւն աշտէից, որ իրենց փայլեն կը նշմարուէին, եւ բազմութիւնն այնչափ սկսէր էր շատնալ, որ մարդկային շունչի ամպ կը ձեւացըներ:

— Գիւղապետ եղբարք, մօտ եկէ՛ք,— ըսաւ տէրտէրը,— ինչ մթութեան մէջ կը ծածկուիք, երեւալու օր է, Սուրբ Կարապետ, Տարօն, նախարարք, իշխանք, քահանայք եւ ժողովուրդք մեր Սասնոյ լեռն ի վեր կը նային. ահա մեծ վանքէ եկած կոնդակը,— եւ ձեռը ձգեց՝ ցցուց ժողովրդեան կրկին կնիքներով մագաղաթ մը,— ե՞ս այս դիրը եթէ կարենամ էլ կարդալ անօգուտ է, եւ դուք լեզուն չէք իմանար. բայց իմաստը ամենքս գիտենք, այսօրուան բան չէ, հին պատմութիւն է. հարիւր տարի եւ աւելի է, որ այդ նզովեալ արաբը մեր դաշտերը կ'իջնայ, կողողէ. եթէ Ս. Կարապետի օրհնենք չը լինէր, եթէ Լուսաւորչայ զօրութիւն չլինէր, այդ դաշտի երես մէկ՝ քրիստոնեայ չէր մնալ, հայուն անուն ոչնչացել էր Տարոնոյ մէջէ: Բայց մե՛ծ է զօրութիւն Քրիստոսի, այսօր արաբ կ'ուգայ, կը ջարդէ, գերի կը տանի հայը, վաղը հայը կիջնէ արաբին վրայ, ամենքը կը ջարդէ,